# ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

## ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն)

8. Հյ. բանամ = հնդեւր. *bhə-nā́-mi ոչ միայն բացի, բաց, բացել, այլ եւս բաց (բացայ, բացեր, ի բաց) եւ բաց նխդ. «զատ ելեալ» ձեւերուն մէջն ալ ունին ց ձայնը, որ հնդեւր. sk̂h է։ Հաւանական է, որ այս հնդեւր. *bhə-nā́-mi *bhu̯ə-nā́-mi-էն էր, ուր խարիսխը *bheuā «ըլլալ, ծնանիլ» է, առաջին լրացեալ աստիճան (Vollstufe I) հհնդ. ապառնի bhavišyati «պիտի ըլլայ», bhávitum «ըլլալ», — երկրորդ լրացեալ աստիճան (Vollstufe IIa) լատ. fuam, յն. φυή «աճումն», լիտ. buvaũ «էի», IIb, լատ. amā-bam (-*bu̯ām); — նուազեալ աստիճան (Reductionsstufe) հհնդ. bhū-tá-s, á-bhūt, յն. ἔφῡ, հսլաւ. byti, լիտ. búti; աներեւոյթ լինող աստիճան (Schwundstufe) յն. φύσις, լատ. futūrus (Hirt, Ablaut, էջ 105)։ Հյ.ի մէջ հնդեւր. ā եւ ə ալ ա է, զ. օ. հայր = հնդեւր. *pə-tḗr, իսկ հնդեւր. ā-ով հաց = հնդեւր. pā-sk̂h-o-m (բստ Հեղ.-ի KZ 37, 428), բաց ուրեմն հնդեւր. *bhā-sk̂ho-s (*bhu̯ā-sk̂hos)։ Ինչպէս արդէն գիտենք, բոց եւ խոյց (= հնդեւր. *bhoq-sk̂h-o-s եւ *qhŭ-sk̂h-o-s կամ *qhŭ-s-sk̂h-o-s) բառերը ալ զայս սկզբնական ներկայի մասնիկը հյ. ց = հնդեւր. sk̂h-ունին (տ. Հանդ. 17, 152)։ Spr. Abh. 2, 156 զրոյց բառը ալ այնպէս բացատրել եմ, որ զ նխդ. է (հմմտ. հյ. զգեստ = լատ. ves-ti-s) եւ *րոյց = հնդեւր. *re'o-sk̂h-o-s, գոթ. rū-na «գաղտնիք, խորհուրդ ծածուկ, որոշումն թաքուն», լիտ. ru-n-āt «խօսել», հբգ. rún «գաղտնիք», յն. ἐ-ρευ-νάω «դիտել, լրտեսել»։ Իսկ զգեցեմ, զգեստ բստ Հեղ.-ի Spr. Abh. 2, 242 հնդեւր. *u̯os-sk̂h-e-mi, *u̯os-sk̂h-o-s է, որուն հնդեւր. խարիսխ է *(o)u̯es : ou̯e «ծածկել, զգեցուցանել». լիտ. au-nù «հողաթափ զգենուլ», յն. ἕν-νυ-μι «զգեցուցանել», գոթ. was-ti «զգեստ», լատ. ves ti s, հհնդ. vastram «զգեստ»։ Հյ. զգեստ, զգենում, ագանիմ, առագաստ։

Հյ. որոնեմ յն. ἔρευνα բառին հետ կապ չունի, ինչպէս Bugge, Beiträge 37 հետեւ. ուզեց բացատրել, ընելով, որ հյ. ձեւը *orunem-էր, հմմտ. որձամ, առաջ *որուծամ, յն. ἐρεύγομαι (Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique 25).

Հնդեւր. արմատը հյ. բառին նոյնպէս *oro էր, ինչպէս յն. ὄρ-νις 'թռչուն', ὄρο-ς 'լեռն', եւ ὄρνῦμι 'շարժել', համապատասխանող բառեր կը ցուցընեն՝ նշանակութեան նկատմամբ հմմտ. յուզեմ որ հյ. ի մէջ ոչ միայն «որոնեմ», այլ եւ «շարժեմ» կը նշանակէ։

9. Հյ. ռ. պզտիկ. բառ ին հնդեւր. *pū-pū-zdī-q-, ուր կրկնաձեւ *pū pū, որ հյ.ի մէջ պղ, յետոյ պեղալ, հնդեւր. *pōu-pū 'ծնանել, (Stolz, IF 15, 58) արմատին կը պատկանի, այս *pū-pū նախահյ.ի մէջ 'ծիծ, նշանակութեամբ, հմմտ. իտ. poppa, պրով. popa, հֆր. poupe 'պտուկունք ստեանց, նֆր. poupe, (բստ Sachs-Villatte-ի) 'ծիծ, (Stolz, IF 15, 62), -զտ պզտիկ բառի մէջ -ստ գրաբար ձեւին համապատասխանելով, հնդեւր. *sed (հյ. նստ-ի-մ) արմատը ՏՍՏ կու տայ, իսկ իկ վերջաւորութեան -ի-ը հնդեւր.ի մէջ երկայն, իգական էր, հմմտ. լատ. sedī-le, ուր. *sedī = 'նըստիլը', (Walter Otto, IF 15, 42)։

Ուրեմն պզտիկ ռմկ. բառը հնդեւր. *pū-pū-zdī-q- առաջ 'ծծի մօտ նստիլը', յետոյ 'ծծի մօտ նստողը', տղայ, փոքր, կը նշանակէր, հմմտ. լատ. scrība, հնդեւր. *sqreibhā 'գրելը', հետոյ 'գրողը', IF. 15, 48 եւ 97։

(Շարունակելի) ՂՈՒԿԱՍ ՊԱՏՐՈՒՊԱՆԵԱՆ

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Սրբազան Քահանայապետն մեր Պիոս Ժ.երորդ իւր թղթովն (breve), տուեալ ի 29 Յունուարի 1904, հաճեցաւ զԳերյարգելի Հ. Թադէոս Ծ. Վ. Թոռնեան Մխիթարեան Ընդհ. Աթոռակալ Առաջնորդն անուանել Թագադիր Աքքայ. միանգամայն Փետրուար 22ին զինք ընդունեցաւ առանձինն ունկնդրութեան:*

## ԱՅԼԵՒԱՅԼՔ

## ԾԱՂԿԷՓՈՒՆՋ

*1. Գիւտաւոր ազգային մը. – «Ձայնաժամը»։ – 2. «Նահատակ»։ – 3. Լրագրական։ – 4. Հայկական ճարտարապետութեան մասին։*

1. Գիւտաւոր ազգային մը. — «Ձայնաժամը»։ Երկու—երեք տարի կայ որ Թագւոր էֆ. Մելքոնեան ազգայինը՝ որ Տատեան ազնուազարմ տոհմին մերձաւոր ազգական է եւ բնիկ Պոլսեցի, մայրաքաղաքս եկեր էր իւր շատ տարիներ յառաջ հնարած «Ջրոյժ» գործիքը կամ գտած գիւտը՝ այսինքն քիչ ուժով շատ ոյժ արտադրող մեքենան կատարելագործելու։ Այս մեքենայով զբաղած միջոցին՝ յղացաւ ի մէջ այլոց Ձայնաժամի կամ խօսող-ժամացոյցի (Phonohorloge, Sprechuhr) գաղափարն ալ։ Աս համոզումը թէ «քանի որ ձայնախօսը (phonographe) հնարուած է, ժամացոյցը իւր ժամանակը հաղորդելու նպատակին աւելի յարմար ու համաձայն պիտի ըլլայ, եթէ հնչման՝ բարբառը փոխանակենք»․ մտաբերել ու կազմել տուած է հնարչին այս երկուքին բաղադրութիւնը։ Փոխանակ սովորական ժամացոյցին ժամերուն 1—12 մատղիր ըլլա-

digitised by A.R.A.R.@